

զհետ եղևն իմանալոյն : Վանդի քաջ
 գիտացին՝ զի եթէ զկենցաղս սիրէին,
 ոչ կարէին սիրել և զհանդերձեալն,
 և զհայր հանդերձելոյն . քանզի քաջ
 ՚ի միտ առին զասացեալն ՚ի Տեառնէ
 եթէ՝ « Այլ կարէք երկուց տերանց
 ծառայել, Աստուծոյ և մամոնայի » :
 Այգա և միք ծանկցուք զկոչումն սուրբ
 յոր կոչեցաք ՚ի Տեառնէ, և թողեալ
 զստրիս՝ զհետ լիցուք հանդերձելոյն,
 և խակացուք հանասլազ զոր մահուն
 և զգառաստանին, զի մի՛ եկեալ Տէրն
 յանկարծակի գտանիցէ զմեզ ՚ի քուն,
 ընդ մէջ հատանիցէ, և զբաժինս մեր
 ընդ անհաւաստ գիցէ . զի ինքն ասաց
 ամենայն հաւատացելոց թէ՝ « Ար-
 թուն կացէք զի ոչ գիտէք զժամ և
 զժամանակ, թէ երբ գայցէ Արդի
 մարդոյ » . և թէ՝ « Արանի ծառայիցն
 այնոցիկ՝ զորս եկեալ Տէրն գտանիցէ
 արթունս և սրտարտաս . ամէն ամէն
 ասեմ՝ ձեզ, զի գօտի ընդ մէջ ասցէ
 և բազմեցուսցէ զնոսա, և անցեալ
 պաշտեսցէ զնոսա » :

ՎԻՔՐԻԷԼ

Պօղոս Կարապետեանց :



« Լաւ է մարդոյ բնաւ շնանիլ՝
 քան կեալ յանցաւորութեամբ » :


ՀՈՄԵՐՈՍ

Ամենայն գոյութիւն որք ընդ տի-
 եղերս՝ բանականի և զգայականի բե-
 րեն յանձինս զյատկութիւնն, որք ըս-
 տեղծեալ են ՚ի փառս Աստուծոյ, զի
 Աստուած փառաւորի և փառաւո-
 րեալ է միայն յարարածս իւր : Արդէս
 ամենայն գոյութիւնք, նոյնպէս և
 մարդն՝ ՚ի մէջ ամենայն արարածոց
 գերագոյն հանդիսանայ գեղապանծ
 վայելքութեամբ և իմոցական ճրիւքն,

պարտի զամենայն զգուշութիւն յան-
 ձին ունել ոչ անցանել զպատուիրա-
 նաւն և զօրինօք զորս եդ արարիչն
 բնութեան, և փառաւորել զՏէր ՚ի
 գործս բարիս որոյ վասն և ծնեալ խկ
 է . ահա զայս պարտաւորութիւն
 նոյն ինքն բանականութիւնն դնէ ՚ի
 վերայ նորա : Այլ զի չգիտիցէ նա զվսի-
 ճանական նպատակն որ վասն ծը-
 նեալ է, ոչ գործէ զարժանին բնու-
 թեան իւրոյ, այլ թերադրուէ բնու-
 թեան և եթ հետեւի և ծառայէ նմա,
 և հեռացել հեռանայ յիսկական յատ-
 կութենէ մարդկութեան և ՚ի վախ-
 ճանէն իւրմէ և յանցաւոր գտանի,
 աստ ահա ՚ի յանգ ելանէ բարոյա-
 կանն Հոմերի թէ՝ « Լաւ է մարդոյ բը-
 նաւ խկ շնանել, քան կեալ յանցա-
 ւորութեամբ » : Օ ի մարդ յանցուց-
 եալ ոչ միայն անձին բերէ զազէտս ան-
 թիւս, այլ և զայլս անկարգ վարու-
 քին դայթակղեցուցանէ և լինի ա-
 ոխթ կորստեան նմանոյն, և կամ
 եթէ չար ինչ արարեալ է, երկուցեալ
 ՚ի կորստենէ պատուոյն՝ ջանայ արստա-
 ւորել և զայլս վայրապար, որով լինի
 և մարգասպան : Հարցցուք ուրեմն,
 եթէ որ անձինն անարժան և յան-
 ցաւոր գնացիւք և զայլս գայթակ-
 ղեցուցանէ, քանի՞ կրկնապատիկ պատ-
 ժոյ չիցէ արժանի . այն, եւ ես ա-
 սեմ՝ ըստ Հոմերի թէ, Լաւ է այն-
 պիււն շնանել, քան ծնանելով
 անչքացուցանել զփառս բնութեան
 իւրոյ . ահա վասն այսպիսեաց ասէ
 Վրիստոս . « Աւելի նմա եթէ չէր խկ
 ծնեալ » : Այլ Աստուած ինքնին ստրջա-
 ցաւ վասն ստեղծանելոյն զմարդ . ուս-
 տի զայնոցիկ որք առ Վոյիւն՝ ասէ .
 « մի մնասցէ հօգի իմ ՚ի մարդիկդ այդ՝
 վասն լինելոյ դոցա մարմին » : Վանդի
 մարմնով միայն էին և չլինեալէր լոյս բա-
 նականութեամբ առ նոսա, և մեռեալ հոգ-

և ով վասն որոյ և զամենեւեան ջրհեղեղաւ կորոյս , զի յայտպիտեաց աստի հեռի է բարուոյ անկաղաւթիւն . իբր ըզ շնչաւոր գիտակ մեռելատիպ ջրջին յաշխարհի ՚ի մնաս մարդ կուէ . Այլ վասն զի զամենայն մնասակարս պարտինք ՚ի բաց մերժել ՚ի մենջ , սպաս զայս օրինակ գոյթականցուցիս և թէ երբէք գտանիցին առ մեզ , ՚ի բաց հեռացուցուք ըստ բանին Վրխարտի թէ « Եթէ՛ աջ ձեռն ըս գոյթականցուցանէ զքեզ , հաս զնա և ընկեա ՚ի քեանս . որով և զծաղիկ հասակ պատանեկութեան մերոյ պահէմք անթառամելի իբր ՚ի խորշակաբեր հոգմոց :

Ներքին Պաշտարիան
Անթիշի :



Ա. Ռ. Ա. Կ

Գեղեցիկ կաղնին :

Հովիւ մը իւր սրբուոյն հետ կաղնիի մը շաքին տակ նստած ժամանակ երեք օտարական մարդիկ հանդիպեցան հան , որոնց հագած կարմիր և երկնագոյն հանդերձը , գլխունուն դրամ արջու մորե է : գլխարկը եւ հրացայտ գէնքերնին զինու սրական կարգէ ըլլալ կը ցուցնէին զիրենք :

Կանգնեցան ասոնք կաղնիի քով աւնոր գեղեցիկ թիւնը դիտելու , որուն վրայ հիանալով անոնցմէ մէկը ըսաւ . « Ի՛նչ պատուական ծառ է , եթէ ասոր փայտովը անուխ շինուի մեծ շահ կրնայ բերել » : Հովիւը պատասխան տուաւ այս խօսքերուն ըսելով . « Ա՛ճ խաղորձ այդ ըսածդ կարելի է » :

Յետոյ երկրորդը դարձաւ ըսաւ , « Եթէ հնար ըլլար ասոր կեղեւը առնել , կաշի աղելու համար առշտ մի շենել կուտայի որ ամբողջ տարի մի կ'երթար ինձ » : Հովիւը դարձեալ ըսաւ . « Ի՛սածդ ճշմարիտ է , խաղախորդ ,

բայց ախոս չէ՞ սոյակէս գեղեցիկ կաղնիին կարելու : Ա՛յրջոպէս երրորդը սկըտաւ խօսիլ ու ըսաւ . « Ե՛հ , է՛հ , ի՛նչ ալ շատ կաղին բեռցած է , ուր էր որ ասոնցմով իմ խոզերս պարարտացնէի , և աղնիւ երշիկներ շինելի ծախելու համար » : Հովիւը անոր ալ աս պատասխանը տուաւ . « Սոսադորձ , քիչ ժամանակէն պիտի ծախուին այդ կաղնիները , և դու կրնաս տիրոջը քովն երթալ և ծախու առնել զանոնք » :

Այբար օտարականները մեկնեցան , տղան ըսաւ իւր հօրը . « Հայրիկ , շատո՞նց ՚ի վեր է որ կը ճանչնաս այդ մարդիկը » : Հայրը պատասխանեց . « Այս առաջին անգամ է որ կը տեսնեմ զիրենք » : Կրկնեց տղան . « Ուրեմն ուսկէ՞ց գիտես , որ առաջինը անխաղորձ է , երկրորդը խաղախորդ , և երրորդը մաադորձ . որովհետեւ կարելի չէ զանոնք տեսնալով միայն ինչ արհեստի տէր ըլլալին իմանալ , ինչու որ երեքն ալ զինու որի հագուստ հագած են » : Ճշմարիտ է , կրկնեց հայրը , որ կարելի չէ զանոնք իրենց հագուստէն ճանչնալ , բայց ես իրենց խօսքերնէն իմացայ արհեստնին , որով հետեւ ամեն մարդ իւր գործերուն վրայ յօժարութեամբ կը խօսի , մանաւանդ ամեն բանէն աւելի նախա մեծար կը համարի իրեն պիտանի եղաններուն վրայ խօսիլ : Այսպէս և առաքինի մարդիկ միշտ բարի բաներու վրայ կը խօսին , իսկ վատերը իրենց խօսքով զիրենք կը մտաննեն , անոր համար ամեն մարդ գիւրաւ կրնայ ճանչնալ զանոնք և զգուշանալ անոնց օրինակին հետեւելու :

Բերնին խօսքերը կրնան ամեն բան յայտնել , ինչ որ մարդիկ կարծեն որոն խորը ծածկել :

Գեորգ Տ. Յարդ-Ինկեան
Իսմայէլի : Ա. Վ. Կ. Կ :